Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Լոռու մարզի « Բազումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Ազգային արժեհամակարգի ձևավորումը և սերմանումը «Սասնա ծռեր» էպոսը ուսուցանելիս »

Վերապատրաստող, մենթոր՝ Սոնա Եղիազարյան

Ուսուցիչ՝ Զարինե Ամիրյան

Վանաձոր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. *Ներածություն* _ _ _

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող ժողովրդավարական, քաղաքական, հասարակական,մշակութային, տնտեսական մի շարք իրադարձություններով պայմանավորված՝ փոխվում են հասարակության զարգացման հիմքում ընկած կարևոր համակարգեր և ոլորտներ: Մարդկության ձարգացման նոր միտումները հանգեցնում են անձի արժեքային համակարգի, վերաբերմունքի, վարքագծի, աշխարհընկալման փոփոխությունների: Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապված է հասարակության մեջ տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններով: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որը հիմնվում է ազգային արժեքների և բարոյական ընկալումների հիման վրա: Նորագույն, օր օրի զարգացող տեխնոլոգիաները, ծրագրերը, կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու նորարարությունները թելադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր աշակերտի: Անհրաժեշտ է գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, ազգային և հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է: Ազգային արժեքների ձևավորման գործում մեծ է հատկապես «Հայ գրականություն » առարկայի դերն ու նշանակությունը: Գրական ստեղծագործությունների և բազմաթիվ գրական կերպարների միջոցով աշակերտների հոգում ձևավորվում և սերմանվում են ազգային արժեքներ և որակներ:

Թեմայի արդիականությունը՝ հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ բանահյուսական գրվածքներ, որոնց մեջ ամենաերևելին «Սասունցի Դավիթ» էպոսն է: Էպոսի դարավոր պատմությունը փաստում է, թե ինչպես է բանահյուսական այդ գլուխգործոցը դարեր ի վեր ոգեշնչել հայ ժողովրդին,պարուրել նրա միտքն ու հոգին, հասել մինչև մեր ժամանակներն ու այսօր էլ իր գաղափարներով և արժեհամակարգով խիստ այժմեական : Վերլուծելով էպոսի հերոսների արարքներն ու հասարակական վարքը,արտացոլելով նրանց գլխավոր հատկանիշները՝ ազատատենչություն, հայրենասիրություն, մարդասիրություն, զգացմունքայնություն,

մարդկային մի շարք բարոյական արժեքներ, ընդգծել ենք էպոսի ոչ միայն ազգային, այլև՝ համամարդկային էությունը: Սասնա հերոսները քաջ են, ազատատենչ, հերոսական,վեհանձն, բռնության դեմ՝ անզիջում, լավի դեմ՝ անսահման բարի ու սրտակից, մանկական մաքուր պարզությամբ, բայց ոչ՝ պարզունակությամբ: Տարբեր իրավիճակներում հերոս- դյուցազունները չեն կորցնում իրենց մարդկային բարձր առաքինություններն ու բարոյական արժեքները:

Նպատակը և խնդիրները. Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել «Սասնա ծռեր» դյուցազներգության ուսուցումը ավանդական և ժամանակակից մեթոդներով, աշակերտների մեջ ձևավորել և ամրապնդել ազգային արժեհամակարգը, ուսումնասիրել հերոսների նկարագիրը , տալ էպոսի բնութագիրը, վեր հանել ազգային և համամարդկային ներուժն ու գաղափարը: Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ Ուսումնասիրել «Սասնա ծռեր» դյուցազներգության բովանդակությունը և դրանց ուսուցման առանձնահատկությունները դպրոցում:
- ✓ Պարզաբանել էպոսի ընդհանուր բնութագիրը և ուսուցման կարևորությունը;
- ✓ Ներկայացնել էպոսի ավանդական և ժամանակակից ուսուցման առանձնահատկությունները:
- ✓ Ներկայացնել էպոսի հերոսների բնութագիրը, նրանց կարևորությունը և առանձնահատկությունները:
- ✓ Ներկայացնել դասի պլանի տեսքով:

Վարկածը. Ենթադրվում է , որ նպատակների միջոցով ազգային էպոսի ուսումնասիրությունը, հերոսների գործողությունները և մղումները աշակերտների մեջ կսերմանեն և կձևավորեն ազգային արժեքներ՝ ազգային մտածելակերպ, հոգևոր ավանդույթների պահպանում, գեղագիտական ընկալումներ, մշակութային արժեքների ամրապնդում և արժևորում, մի շարք բարոյական ընկալումներ՝ հայրենասիրություն, քաջություն, արդարություն, ազատատենչություն, մարդկանց կարեկից լինելու պատրաստակամություն:

Ազգային արժեհամակարգի ձևավորումը և սերմանումը «Սասնա ծռեր» էպոսը ուսուցանելիս

«Ազգային արժեհամակարգը ապրեցնում է ազգը »

Զ. Ամիրյան

Ազգային արժեհամակարգի դրսևորումը և արտացոլումը «Սասունցի Դավիթ» էպոսում

Հայ ժողովրդական բանահյուսության յուրահատուկ և անկրկնելի գանձն է «Սասնա ծռեր» էպոսը, որն իր երրորդ ճյուղի գլխավոր հերոսի անունով կոչվում է նաև «Սասունցի Դավիթ»: Այն արտացոլում է Հայաստանում մոտ երկու հարյուր հիսուն տարի տևած արաբական բռնատիրության ժամանակաշրջանը: Էպոսի ընդգրկած ժամանակահատվածը VII-X դարերն են: Սակայն էպոսի պատմումների ստեղծումը կապվում է ավելի ուշ ժամանակների հետ: Դյուցազնավեպը արտացոլում է հայ ժողովրդի ազային նվիրական իղձերն ու երազանքները, բնավորությունը, աշխարհընկալումը և հոգեկերտվածքը; Այն, հյուսվելով ժողովրդի կողմից, ներկայացրել է հայ ժողովրդի լավագույն ձգտումները, ամենանվիրականն ու երանելին: Սա հաստատվել է ստեղծագործության հազարամյա կենսունակությամբ: Շատ գեղեցիկ է նկարագրում մեծանուն ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հայ ժողովրդական էպոսի ստեղծումը՝ այն համեմատելով մարգարտի ստեղծման հետ. «Քանի դեռ խեցու մեջ աննշանավազահատիկի ձևով կողմնակի մարմին չի ներթափանցել, քանի դեռ կենդանին չիհիվանդացել, և նրա վրա չի գոյացել չնչին աչքի համար անտեսանելի կրաշերտ, ոչ մի մարգարտի մասին խոսք լինել չի կարող: Այնուհետև ելուստի շուրջը շերտավորվում է աղերի ազդեցության տակ գոյացած նստվածքները, և ի վերջո ստացվում է սքանչելի մարգարիտ, որը հետագայում կարող ենք նայել ու հիանալ»: Իսկապես, ինչպես խեցու մեջ մարգարիտ է գոյանում, այնպես էլ հյուսվել է հայ ազգային էպոսը: Հիմքում թեթև աննշան թվացող մի կորիզ է, սակայն, այն, իր վրա նորանոր շերտեր ընդունելով, վերածվել է մի չքնաղ մարգարտի, որն իր անջնջելի հետքն է թողել ու թողնում սերունդների վրա՝ արժանի տեղ գրավելով համաշխարհային գրական մեծ օվկիանում:

Այն ոչ միայն ազգային կենդանի նկարագիր է, այլև համամարդկային կենսական իրավունքի պաշտպանության լավագույն օրինակ»:

«Ամեն ժողովրդի էպոս տվյալ ազգի անձագիրն է, նրանով նա իրավունք ունի ներկայանալու աշխարհին»,- գրում է բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը: Հայ ժողովրդական էպոսն արտացոլում է ժողովրդի կյանքը, վարքն ու բարքը, արտաքին ու ներքին կեղեքիչների դեմ մղված պայքարը, ինչպես նաև պատերազմի ու խաղաղության, ստեղծագործ աշխատանքի ու բարեկամության ժողովրդական ըմբռնումը: Ֆրանսիացի մեծ հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին «Սասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն թարգմանության իր նախաբանում առանձնացնում է պատմական այն շերտերը, որոնք և կազմել են էպոսի ժամանակային հիմքը. «Նրանում կան հայերի պայքարը արաբական խալիֆաթի և Եգիպտոսի մելիքների դեմ, արտացոլված են հարաբերությունները խաչակիրների և բյուզանդական կայսրերի հետ»:

Էպոսի մի շարք պատումների համաձայն՝մեր ժողովրդի վրա հարձակվել են աշխարհի բոլոր կողմերում եղած արյունարբու ցեղերը, որոնց քանակի անսահմանությունն էպոսում միշտ արտահայտվել է ծովի ավազի և երկնքի աստղերի պատկերավոր համեմատությամբ:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ենթարկվել է ոչ միայն ֆիզիկական, այլև տնտեսական, իրավական, քաղաքական, բարոյական ծանր ճնշումների: Էպոսի բացառիկ արժեքներից են նրանում արտահայտված ազգային կարևորագույն հատկանիշներն ու հայոց արժեհամակարգի տարրերը՝ հայրենասիրությունը, ազատատենչությունը և մարդասիրությունը, կրակոտ բնավորությունն ու գերբնական ուժը:

Ազատության ձգտումը դրսևորվում է էպոսի սկզբից մինչև վերջ: Ի վերջո՝էպոսը կյանք է առել հայ ժողովրդի ազատագրական պայքարի բովում: Հայրենասիրությամբ ,ազատատենչությամբ, գերբնական ուժով նրանք պայքարում են ժողովրդի անկախության ու ազատության, մարդկանց համար խաղաղ ու երջանիկ կյանք ստեղծելու, ստեղծագործ աշխատանքով զբաղվելու համար: Էպոսի առաջին էջերից

հորդում է հայրենասիրությունն ու մեծ մարդասիրությունը, որի կրողը հայ կինն է՝ Ծովինարը՝ հայոց Գագիկ թագավորի դուստրը:

Արաբական խալիֆը հարկի դիմաց պահանջում է, որ Գագիկ արքան կնության տա դստերը և զգուշացնում, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Հակառակ հոր ցանկության՝ Ծովինարը մտածելով ժողովրդի մասին՝ վճռում է իր անձը զոհել հանուն ընդհանուրին գնալ Բաղդադի խալիֆի մոտ:

Ծովինարի այս արարքը ոչ միայն հայրենասիրության դրսևորում էր, այլ նաև՝ անձնազոհության վառ օրինակ: Ժողովուրդն անսահման հայրենասիրությամբ է օժտել էպոսի բոլոր հերոսներին՝ լինի կին, թե՝ տղամարդ: Հայրենասիրության արմատից էլ ծնվել են այս դյուցազունները: Ծովինարի անձնազոհությունը ոչ միայն հայ ժողովրդի փրկության համար է, այլև՝հայրենի հողի ու ջրի, որից էլ ծնվում են երկվորյակ եղբայրները՝ Սանասարն ու Բաղդասարը: Ջուրն էպոսում, որպես բնության կենարար տարերք՝ հավերժության խորհրդանիշ է: Սա ցույց է տալիս և՛ հայ ժողովրդի, և՝ հայրենի հողի հավերժությունը: Այդ հավերժությունը պահելու և պահպանելու համար են մարտնչում Սասնա հերոսները, որոնց ժողովուրդն օժտել է գեղեցիկ, վեհ և գերբնական գծերով: Էպոսի հերոսների հետ մեկտեղ հանդես է գալիս հենց բուն ժողովուրդը՝իր գրեթե բոլոր շերտերի ներկայացուցիչներով:

Էպոսում արաբական բռնակալության դեմ կռվում են Սասնա չորս սերունդ դյուցազունները՝ Սանասարն ու Բաղդասարը, Մեծ Մհերը, Դավիթն ու Փոքր Մհերը: Նրանք բոլորն էլ տարված են ազատ ապրելու գաղափարով: Պայքարելով արաբ խալիֆայի դեմ՝ դյուցազունները հաջորդաբար ջարդում են նրա ուժերը: Բայց հենց որ մի սերունդը մահանում է, ռազմատենչ թշնամին նոր ուժեր է հավաքում ու կոտորածով մտնում Սասնա տուն ու հարկ պահանջում: Ազատագրական պայքարի ոգին միշտ վառ է մնում էպոսում: Էպոսում ազգանվեր ու հայրենասիրական գործեր կատարում են թե՛Սանասարն ու Բաղդասարը, թե՛ Մեծ Մհերը, թե՛ Սասունցի Դավիթը, թե՛ Փոքր Մհերը: Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն է: Առաջին ճյուղում արդեն Սասունում հաստատված Սանասարն ու Բաղդասարը սկսում են կառուցել իրենց բերդը: Բայց սկզբում կացարաններ են պատրաստում աշխատավոր մարդկանց համար: Այդ քայլի նպատակը մարդասիրական է: Էպոսում կա աշխատավոր

մարդու նկատմամբ հատուկ պաշտամունք, և Սասնա դյուցազուններն ապրում են այդ գիտակցությամբ: Կյանքի ու մահվան այս թոհուբոհում ժողովուրդը չի մոռանում ստեղծարար աշխատանքի մասին, հակառակը, պայքարում է համաժողովրդական խաղաղ աշխատանքի համար; Դյուցազուն եղբայրների կառուցած Սասնա բերդը դառնում է ազատ, հզոր, անհաղթ Հայաստանի խորհրդանիշը: Բովանդակ ազատության ձգտող ժողովուրդը, համոզված է, որ իր երազած բովանդակ ազատությանը կհասնի միայն նոր կառուցած տանը:

Ժողովուրդն իր դարավոր երազանքներն իրականացնողներին օժտում է գերբնական ուժով, նա հասարակ մարդուն անզոր է համարում դիմակայելու, իր գլխից մութ ամպերը վանելու համար: Հզոր, կատաղի թշնամու դեմ մահացու կռիվ մղելու համար ժողովրդին հարկավոր են դիցական հերոսներ՝ ջրածին քաջեր, ովքեր օժտված են անսահման բարի ու խիզախ սրտով: Կենարար ջրից են հզորանում հերոսները:

Հովսեփ Օրբելին գրում է. «Այս չորս հերոսների անունները ժողովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խաճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»: Օժտված լինելով բարոյական բարձր հատկանիշներով՝ Սանասարն ու Բաղդասարն իրենց պարտքն են համարում մարտնչել հանուն հայ ժողովրդի ազատության ու հետագա գոյության:

Այնուամենայնիվ, հայ ժողովուրդը մեծ բարեսրտությամբ ու հստակությամբ է կերտել իր թե՛ դրական, թե՛ երգիծական, և թե՛ բացասական հերոսներին»,- գրում է Ֆ. Ֆեյդին: Սանասարի մահից հետո Սասունը դառնում է հարկատու Մսրա Մելիքին: Հայ ժողովուրդը ստիպված է լինում պայքարել և արտաքին և ներքին թշնամու դեմ: Այս ճյուղում նույնպես տեսնում ենք անձնազոհ և իր հայրենիքը սիրող հայ կնոջ կերպարը: Մհերի կինը՝ Արմաղանը, մի կողմ դնելով կանացի ինքնասիրությունն ու վիրավորանքը, ներում է ամուսնուն, որն իր երդման համաձայն գնացել էր Մըսր: Եվ Սասնա ճրագը վառ պահելու համար դրժում է իր ուխտը և որդի ծնում: Չնայած նրան, որ ամուսինները գիտեին՝ իրենց ինչ է սպասում, միևնույն է՝ զոհում են իրենց: Դավթի ծննդյան դրվագից ոչ միայն անձնազոհություն, այլև հայոց տունը շեն պահելու և հայրենիքի հանդեպ մեծ սեր է հորդում: Նրա կյանքն էպոսում պատկերված է ծննդյան օրից մինչև մահը: Նա Սասնա

դյուցազունների մեջ ամենահմայիչն է, ամենատեսանելին, կյանքով լին ու ամենագեղեցիկը: Ծնված պահից արդեն որբացած Դավիթն իր մանկությունն անց է կացնում օտարության մեջ՝ Մսրում: Սակայն սնվում ու մեծանում է միայն Սասունից բերված կարագով ու մեղրով: Սա հայրենի եզերքի հետ մարդու ոչ գիտակցված, բայց ամուր կապն է: Ուժի կողքին Դավիթն ունի բնավորության մի կարևոր և ուշագրավ գիծ ևս՝ ազատատենչ է, չի հանդուրժում բռնությունը և ոչ մի կերպ չի հնազանդվում Մսրա Մելիքին: Երբ նրան զոռով ուզում են անցկացնել Մելիքի թրի տակով, նա նետվում է մի կողմ, ճկույթը դիպչում է քարին և «քարեն կրակ էլավ»:

Դավիթը պետք է տնօրինի ազգի ներկայի ու ապագայի սրբազան գործը, նա հաջորդն է իր հոր՝ Մեծ Մհերի»",- գրում է Ա. Դոլուխանյանը: Մսրա Մելիքի կերպարում խտացված են բոլոր ժամանակների հարստահարիչներն ու բռնակալները: Նա չի բավարարվում միայն ժողովրդի ունեցվածքը հափշտակելով, մարդկանց գերեվարելով: Նա փորձում է գրավել Սասունն ու ստրկացնել ժողովրդին: Դավիթն, էլ լինելով ժողովրդի մի մասնիկը և ունենալով ժողովրդի հուժկու ուժը, պայքարում է բոլոր ժամանակների մսրամելիքների դեմ: Այս մասին գրում է Հովսեփ Օրբելին. «Մեզ համար Սասնա հերոսները թանկ են մի շարք պատճառներով: Ամենից առաջ նրանք թանկ են ժողովրդի հետ ունեցած իրենց միասնության գիտակցությամբ, այն ժողովրդի, որի զավակներն են իրենք»:

Դավթի մեջ արթնանում է ազգի առաջնորդի ոգին ու նա սկսում է անձնազոհաբար և մեծ նվիրումով ծառայել հայրենիքին: Գրիգոր Գրիգորյանը գրում է. «Մերկացրած Թուր Կեծակին ձեռքում Մսրա Մելիքի դեմ դուրս գալով Դավիթը, դաժան կռվում սպանում է նրան և ժողովրդին ազատագրում ֆիզիկական բնաջնջումից: Դավթի հետ է ողջ Սասնա ժողովուրդը՝ սկսած Ձենով Հովանից, վերջացրած՝ արտատեր աղքատ կնոջով: Դավթին խրատող և ամեն անգամ Սասունին սպառնացող վտանգի մասին ահազանգող պառավ կինը՝ Դավթի բոլոր գործողություններին որոշակի ընթացք տվող և նրան օգնող ժողովուրդն է, որը ուժ է ներշնչում հայրենի հողի պաշտպանության համար»: Սա ապացուցում է այն, որ Դավիթը ժողովրդի հավաքական միասնության մարմնավորումն է: Ժողովուրդը նրան օժտել է ամենաազնիվ ու մարդկային բարձր արժանիքներով:

Խոսում ենք Դավթի բացառիկ մարդկային նկարագրից, հայրենասիրությունից և անձնազոհությունից, ուշագրավ է, որ ժողովուրդը կերտել է Դավթին համապատասխան նաև նրա սիրեցյալին՝ Խանդութին: Խանդութի այն խոսքը, թե «առյուծն առյուծ է, էգ լինի, թե որձ», էպոսի հերոսների կանանց՝ հայրենասիրության, անձնազոհության, ամուսնու հանդեպ անսահման սիրո ու հարգանքի, նվիրվածության խտացումն է: Հերոսուհիները գեղեցիկ են, քաջ, հայրենասեր, խոհեմ, զգայուն ու պարկեշտ ,միշտ պատրաստ են զոհելու իրենց կյանքը հայրենիքի, ընտանիքի ու զավակների համար: Ինչպես դրուցազունները, այնպես էլ նրանց կանայք օժտված են արտակարգ գեղեցկությամբ և հմայքով:

Էպոսը մնայուն պատմական հուշարձան է, որը սերունդներին սերմանում է ազգային արժեքային համակարգ և բարոյական մեծագույն արժեքներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, ազատատենչությունը, բարությունը, ստեղծագործ աշխատանքը և սերը դեպի մարդ արարածը: Այն սովորեցնում է նաև ունենալ անկախ հայրենիք և ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի ժողովուրդների հետ: Ֆրեդերիկ Ֆեյդին հայ ազգային էպոսը համարել է աշխարհի ամենախաղաղասեր էպոսը :

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսումնական գործընթացում պետք է առավել կարևորել և շեշտադրել մարդկային ու բարոյական արժեքները՝ դրանք շաղախելով մեր օրերում ձևավորվող ու հաստատվող արժեքային համակարգի հետ: Ի վերջո՝ գրականության ուսուցումն ունի ճանաչողական և դաստիարակչական նշանակություն,քանի որ գրական հերոսների օրինակով կրթում և դաստիարակում է սերունդների: Դաստիարակությունն ու կրթությունն առավել զարգացնելու համար ամեն ազգ պետք է ունենա հարուստ և արժեքավոր գրականություն; Մարդն իր գործով այնքան է, որքան գիտելիք ունի: Գրականության ուսումնասիրությունը սովորողին միայն չի ծանոթացնում գրական երևույթներին , այլ նաև ուղղորդում է դեպի ինքնաճանաչում, կատարելագործում, ինքնադրսևորում: Այն հզոր դաստիարակության միջոց է: Ազգային գրականությունը արդյունավետ միջոց է

բարոյական բարձր արժեքների ձևավորման գործում: Գրականության դասավանդման հիմնական նպատակներից է անձի արժեքային համակարգի ձևավորումը, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը հաղորդակից դարձնել:

Այս դեպքում շատ կարևոր է մեթոդների ընտրությունը, դասարանի աշակերտների ընդունակնությունների ճիշտ ճանաչումը: Եթե ուսուցիչը հասկանում է, թե գիտելիքների ինչ մակարդակի երեխաներից է կազմված դասարանը, ապա նա առավել ճիշտ մեթոդներով է իրականացնում իր առարկայի ուսուցումը: Ուսուցման արդյունավետության համար անհրաժեշտ է ապահովել «զննականությունը»: Էպոսի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է հատկապես միջին դպրոցում: Նոր ծրագրով էպոսի ուսուցումը նախատեսված է իններորդ դասարանում, երբ աշակերտները, տարիքային առանձնահատկության հետ կապված, ավելի են հակված ինքնուրույնության և այս հանգամանքից անհրաժեշտ է օգտվել: Այսինքն՝ աշակերտը կարող է տպավորվել և դյուրությամբ յուրացնել ու իմաստավորել էպոսի գաղափարները՝ դրանք կապելով ժամանակակից իրականության հետ: Դասարանը կահավորում ենք էպոսի թեմաներով ստեղծված նյութերով՝ Հ.Կոջոյանի նկարների, Հր.Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանի վերատպությունները, գրքեր (էպոսի տարբեր հրատարակություններ, գրական մշակումներ՝ Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ը, Իսահակյանի «Սասմա Մհեր»-ը, Չարենցի «Սասունցի Դավիթ»-ը, Հ.Օշականի «Սասունցի Դավիթ թատերգությունը»): Պատերին փակցված պաստառներին մեծերի խոսքերն են էպոսի մասին: Օրինակ՝ «Ոչ մի բանի մեջ ժողովուրդներն այնքան պարզ ու պայծառ չեն երևում, որքան՝ էպոսում» (Հ. Թումանյան) : Մինչ էպոսի ուսումնասիրության ավարտը դասասենյակի՝ էպոսին հատկացված անկյունում ավելանում են աշակերտների՝ էպոսի թեմաներով արած

նկարները: «Սասնա ծռեր էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև» (Հ.Թումանյան): Էպոսի գաղափարական բովանդակությունն ուսումնասիրելիս խնդիր եմ դնում աշակերտների մեջ դաստիարակել այն ներկայացնող հիմնական տարրերը՝ ազնվություն, հայրենասիրություն, բարձր բարոյականություն: Աշխատում եմ զարգացնել

նրանց ազգային մտածողությունը, պետականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Ներկայացնում եմ նոր չափորոշիչներին համապատասխան՝ հանրակրթության պետական չափորոշչի կետերով 5 քայլաշարով դասի օրվա պլան:

Դասի պլան[1]

Ուսուցչի անունը՝ Ամիրյան Զարինե **Առարկան՝** Գրականություն

Դասարանը՝ 9-րդ **Ամիս, ամսաթիվ՝** **Դասի տևողությունը՝** **45րոպե**

Նոր դասի թեման՝ «Սասունցի Դավիթ» էպոսի բնութագիրը

Անցած դասի թեման՝ «Սասունցի Դավիթ» էպոսի ժանրի բնորոշումը

Դասի նպատակը՝ Էպոսի՝ որպես ժողովրդի հավաքական մտածողության արտահայտության

ճանաչում:

1. Էպոսի գաղափարախոսության, հայ ժողովրդին հատուկ բարոյական արժեքների ընկալում և գնահատում, սերմանում;
2. Էպոսի պատկերային համակարգում բարբառի, ժողովրդախոսակցական լեզվի դրսևորումներն ընկալելու, մեկնաբանելու կարողություն:
3. Ինքնուրույն դատողություններ անելու կարողության զարգացում:

Վերջնարդյունքներ՝ **Կիմանա՝** էպոսի բովանդակությունը, էպոսի ժանրայիին առանձնահատկությունները և պատումները, կերպարները, նրանց բնութագրերը, գլխավոր գաղափարը՝ ազատատենչություն, հայրենիքը պահելու, պահպանելու պատրաստակամություն: Էպոսը որպես ժողովրդի հավաքական մտածողության և հոգեկերտվածքի արտահայտություն:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Ուսուցչի օժանդակ ռեսուրսներ *տեսաձայնային և թվային միջոցներ* . Հ.Կոջոյանի նկարների, Հր.Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանի վերատպությունները, գրքեր (էպոսի տարբեր հրատարակություններ, գրական մշակումներ՝ Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ը, Իսահակյանի «Սասմա Մհեր»-ը, Չարենցի «Սասունցի Դավիթ»-ը, Հ.Օշականի «Սասունցի Դավիթ թատերգությունը»), պաստառներ, նկարներ:

Միջառարկայական կապ ՝ պատմություն, աշխարհագրություն . մաթեմատիկա:

Մեթոդներ՝ հարց ու պատասխան, մտագրոհ, դասախոսություն, T –աձև աղյուսակ:

Դասի ընթացքը .

Քայլ 1. Դասի սկիզբ / խթանում/ / 5-7 րոպե /*Ի՞նչ են սովորել աշակերտները: Ինչո՞ւ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նախկին գիտելիքի հետ :* Բնութագրում են էպոսի ժանրը, առանձնահատկությունները, թվարկում են այլ ժողովուրդների էպոսներ : Հարց ու պատասխանով՝ . 1. Ի՞նչ է էպոսը:

2. Ինչպե՞ս է կոչվում մեր ազգային էպոսը:

3. Քանի՞ ճյուղից է կազմված այն:

4. Ի՞նչ հերոսներ եք հիշում էպոսից:

5. Ի՞նչ պատմամշակութային հուշարձան գիտեք էպոսի հետ կապված:

Ուսուցչուհին գրատախտակին գրում է բանալի բառ՝ էպոս ; Աշակերտները հնչեցնում են պատասխաններ և գրում բանալի բառի շուրջբոլորը:



Քայլ 2. Նոր նյութի ներկայացում: / 15-20 րոպե /*Ի՞նչ է սովորելու աշակերտը: Ինչո՞ւ են սովորում այդ նյութը: Որո՞նք են ներկայացվող նյութի կարևոր դրույթները:* Ուսուցիչը դասախոսությամբ ներկայացնում է է էպոսի ընդհանուր բնութագիրը, գրի

առնողներին, պատմական հիմքը, կառուցվածքը, արտահայտած գաղափարները, հերոսներին:

- ✓ Էպոսը նախ և առաջ ներկայացնում է որպես հայ ժողովրդի հավաքական մտածողության և հոգեկերտվածքի արտահայտություն: Ուսուցչուհին խոսում է այն մասին, որ «Սասնա ծռեր» էպոսի մեջ հրաշալիորեն արտահայտված են հայ ժողովրդի բնավորության շատ գծեր՝ ազատատենչություն, հայրենասիրություն, քաջություն, ներողամտություն, բարություն, մարդասիրություն; Հիասքանչ են բոլոր կերպարները, որոնց մեջ առանձնանում է հատկապես Դավթի կերպարը: Էպոսը պատմական և առասպելական իրողությունների զուգադրություն է:
- ✓ Ուշագրավ է դյուցազներգության լեզուն՝ գործողություններով հարուստ պատմողական խոսք, ժողովրդական մտածողությանը բնորոշ չափազանցություններ, կենդանի բարբառային խոսք և հյութեղություն, երգվող հատվածներ և այլն: Անհրաժեշտ է նշել, որ «Սասնա ծռեր» էպոսը հայտնի է Մշո, Մոկաց և Սասունի բարբառներով: Էպոսի պատմական հիմքը 8-10-րդ դարերն են, երբ հայ ժողովուրդը հեծում էր արաբական լծի ներքո, ազատագրական պայքար էր մղում՝ վերականգնելու իր անկախությունն ու պետական ինքնուրույնությունը: Էպոսը բաղկացած է չորս ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: Ամեն ճյուղ սկսվում է ժողովրդի բառ ու բանը ներկայացնող օրհնանքներով, որոնք հող են նախապատրաստում են ճյուղի բովանդակության համար; Քաջ և հայրենասեր հերոսներին ժողովուրդը տալիս է քառսուն կամ հազար օղորմի, իսկ բացասականներին, օրինակ՝ Մելիքին ու Չմշկիկ Սուլթանին չի տալիս օղորմի:
- ✓ Էպոսի մասին 16-րդ դարում առաջին անգամ գրառում են արել պորտուգալացի ճանապարհորդները: 1874 թ. Գարեգին Սրվանձտյանցը հրատարակում է «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով՝ Մուշի բարբառով առաջին պատումը: Պատումը պատմողները ժողովրդական մարդիկ էին, որոնց ասում էին ասացող: Տարբեր ասացողների կողմից պատմվելով՝ էպոսի առանձին ճյուղերը փոխվում են և դառնում առանձին տարբերակներ, որոնք կոչվում են պատումներ: 1939թ. Էպոսի հազարամյակի կապակցությամբ 60 պատումների հիման վրա ստեղծվում է համահավաք բնագիր՝ «Սասունցի Դավիթ» վերնագրով: Գրքի խմբագիրն էր Հովսեփ Օրբելին,

իրականացնողները՝ Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը։ Էպոսը բարձր են գնահատել ոչ միայն հայ, այլև օտարազգի շատ ուսումնասիրողներ։

Քայլ 3.Ուղղորդված գործնական աշխատանք:/7-15րոպե/ *Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին համագործակցված աշխատելու, ուսուցչի ուղղորդմամբ կատարելու գործնական աշխատանք տրված նյութի վերաբերյալ:*

Խոսելով էպոսում արտահայտված ազգային արժեքների և գաղափարների մասին, վերլուծելով հերոսների արաքներն ու հասարակական վարքը՝ ուսուցիչը աշակերտներին ուղղորդում է խորհելու այդ գաղափարների և բարոյական արժեքների արդիականության մասին։ Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և նրանց բաժանում թղթեր, որոնց վրա գրված են նախապես էպոսից դուրս բերված հատվածներ։ Դրանք հատուկ ընտրված հատվածներ են, որոնցում ցայտուն երևում են էպոսի հերոսների բնավորության կարևոր և ուշագրավ գծերը։

Առաջին խումբը, կարդալով հատվածը, պետք է ցույց տա, թե ինչ գաղափար է արտացոլված նրանում, առանձնացնում այն նախադասությունը, որը ցույց է տալիս ժողովուրդների վերաբերմունքը պատերազմների նկատմամբ։

Աղքատ ու խիղճ մարդ են էդոնք.
Որը իր մոր մեկուճարն է,
Որը նոր պսակված տղա,
Որը իր օջախի սունն է,
Որը հանգած մի տան ճրագ։

Երկրորդ խումբը, կարդալով հատվածը, պետք է առանձնացնի այն նախադասությունները, որոնցում երևում է Դավթի միամտությունը և մեկնաբանի։

Բերին, զԴավիթ դրին սեղանի մոտ.
Ոսկին մի կողք լցրին, կրակ մի կողք։
Դրին Դավթի առջև, ասին.
-Դավի՛թ, ա՛ռ,ա՛ռ, ո՞ր մեկ կուզես։
Դավիթ իր ձեռ պարզեց ոսկուն,
Հրեշտակ ձեռնեն բռնեց, տարավ դեհ կրակ։

Իր մատ որ կրակին կըպավ, կրակ կպավ մատին.

Մատ էրելով՝ տարավ բերան, լեզուն էլ էրեց:

Երրորդ խումբը պետք է կարդա հատվածը և մեկնաբանի, թե ինչ գաղափար է այն արտահայտում:

Սանասար ասաց Բաղդասարին.

-Առաջ զմեր բե՞րդ շինենք,

Թե չէ՝ զէդա աղքատ-ուղքատի տներ:

Բաղդասար պատասխանեց.

-Առաջ շինենք զէդոնց տներ,

Ու նոր շինենք զմեր բերդ.

Էդ խեղճ մարդեր չեն կարնա

Արևուն առջև կենա:

Չորրորդ խումբը, կարդալով հատվածը, փորձում է մեկնաբանել Դավթի արարքը:

Գնաց, էլավ Լեռա սարի գլուխ, կանչեց.— «Էհե՛յ*,

Ով քընած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,

Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,

Ով կապեր է՝ էլե՛ք, հեծեք.

Չ'ասեք Դավիթ գող գող էկավ,

Գող-գող գընաց»:

Հատվածների ընտրությունը ամփոփում էր էպոսում արտահայտված ազատաբաղձությունը, հայրենասիրությունը, ժողովուրդների խաղաղ գոյակցելու ցանկությունը, հայ ժողովրդի միամտությունը, մարդասիրությունն ու աշխատասիրությունը, ինչպես նաև ընդգծում, որ մեր ազգային էպոսը մեր ազգային նկարագիրն է:

Ուսուցիչը, հետևելով խմբերի աշխատանքին , հավանություն է տալիս, գնահատանքի խոսքեր ասում կամ հարկ եղած դեպքում բարելավման ուղիներ առաջարկում :

Քայլ 4. Ինքնուրույն աշխատանք / իմաստավորում/ / 3-5 րոպե /: *Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու: Ինչպե՞ս են աշակերտները ինքնուրույն կիրառում օրվա սովորածը:*

Ուսուցիչը թղթերի վրա ներկայացնում է հերոսների անունները, որոշ բնութագրիչ հատկանիշների հետ, իսկ աշակերտները պիտի կատարեն համապատասխանեցում: Ուսուցիչը հետևում է գործընթացին և գնահատում սովորողների աշխատանքները:

Քայլ 5. Դասի ավարտ / կշռադատում/: *Ամփոփվում են դասի կարևոր մասերը, տրվում են տնային առաջադրանքներ:*՝ Գիտեի, իմացա :

/2-5 րոպե/ **Գնահատում՝ _____ Ձևավորված կոմպետենցիաներ ՝ 1.2. 5.**

Տնային հանձնարարություն՝ Կազմել գլխավոր հերոսների տոհմածառը, ավելացնել մյուս հերոսներին և ցույց տալ արյունակցական կապը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մինչև օրս էլ չի մարել հետաքրքրությունը՝ մեր ազգային էպոսի հետ կապված: Այն իր խորունկ և համամարդկային գաղափարներով, ազգային արժեքներով շարունակում է իր հաղթարշավը՝ կրթելով և դաստիարակելով բազում սերունդների;Էպոսը մեր ինքնության արտահայտություններից մեկն է, հարուստ ներաշխարհի վառ ապացույցը: Իրականացնելով «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության ուսումնասիրություն՝ կատարում ենք հետևյալ եզրակացությունները, Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն:

«Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով օժտված քաղաքացիներ:

- ✓ Հայ ազգային էպոսը, որպես մշակութային կոթող, ապահովում է իրպատվավոր և մնայուն տեղը հայերի մշակութային և հոգևոր կյանքում; Այս տեսանկյունից շատ կարևոր է մեր էպոսի գրված առաջնային տեղը հայ մշակույթի մեջ , որով էլ առանձնանում ենք աշխարհի շատ ժողովուրդներից:
- ✓ Հազար տարի առաջ ստեղծված, դարեր շարունակ բանավոր գոյություն

ունեցած մեր էպոսն առանց ճիշտ ընկալելու և գնահատելու դժվար թե կարողանանք ճիշտ ըմբռնել մեր ինքնությունը , ակունքները, իսկ մեր ինքնությունը հասկանալը և ճանաչելը շատ կարևոր է: Էպոսն անհրաժեշտ է մեր ինքնության պահպանման համար՝ մինչև անգամ մեր մշակույթը ձուլումից զերծ պահելու համար: Այսօր ապրում ենք բարդ ժամանակներում, երբ աշխարհը գնում է ‹‹համաշխարհայնացում›› ասված չարիքին, որը միտված է ոչնչացնելու ամեն ազգայինն ու ավանդականը; Եվ այս բարդագույն մարտահրավերների ժամանակաշրջանում ու պայմաններում էպոսի ուսումնասիրությունն ու ճիշտ արժեքը հասկանալը կարևորագույն խնդիր է:

Այսքան դառնություն և արհավիրք տեսած ժողովուրդը կարողացավ պեղել հոգու գաղտնարանները և երկնեց ազնվական և դյուցազուն հերոսներ: Բարոյական չափանիշների և արժեքների պահպանման տեսակետից մեր էպոսը լավագույնն է:

Դավաճանության, նենգության, չարության ոչ մի նշույլ չկա Սասնա հերոսների մեջ: Ընդհակառակը՝ այնքան անաղարտություն և պարզություն կա նրանց կերպարներում; Սա զարմանալի է հատկապես այն առումով, որ միջնադարյան այդ ժամանակահատվածում տիրում էին թալանը, ավերը, կամայականությունները: Չունեինք պետականություն, երկիրը դարձել էր ասպատակությունների թատերաբեմ, բայց, այնուամենայնիվ ,էպոսը պահպանեց իր բարոյական մաքրությունն ու ամրությունը: Միայն այն, որ հազար տարի է, ինչ էպոսը կենսունակ է ժողովրդի մեջ, արդեն մեծ հետաքրքրություն է առաջացնում էպոսագետների շրջանում: Հայ ազգային էպոսը հազար տարի ապրել է բանավոր խոսքում, չի մոռացվել, ընդհակառակը, ավելի է հղկվել և 19-րդ դարում նոր գրի է առնվել, բայց միևնույն է՝ չի կորցրել իր դերն ու նշանակությունը, անսահման գրավչությունը:

- ✓ ·Ցանկացած էպիկական հուշարձան, եթե հիմքում առասպել չունի, այն

էպիկական չէ և չնայած դրան, որքան էլ այն հարուստ առասպելական հիմք

ունի, այն պատմություն է, խոսքի արվեստ: Էպոսը լայն ընդգրկում է ներկայացնում;

Հետաքրքիր զուգահեռ է Ծովինարի անարատ հղիությունը Քրիստոսի ծննդյան

հետ: Այս հետաքրքիր զուգահեռը պահանջում է հանգամանալից և ընդգրկուն քննություն:

- ✓ Այսպիսով՝ էպոսը դիտարկելով որպես հայ ժողովրդի ինքնության կնիք, բարձր

գնահատելով նրանում արտահայտված համամարդկային գաղափարներն ու բարոյական արժեքները, ազգային մտածելակերպն ու նկարագիրը, անհրաժեշտ է հասկանալ, թե որքան կարևոր է այն ճանաչելն ու պահպանելը, նրա դերն ու նշանակությունը մեր կյանքում:

Գրականություն

1. Գասպարյան Դ., Գրականություն, 9-րդ դասարան, Տիգրան Մեծ հրատ.,Երևան, 2018:
2. Գրիգորյան Գր., Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960:
3. Դոլուխանյան Ա., Եվրոպացի հայագետներ V. Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, ԵՊՀ հրատ.,Երնան, 2008:
4. Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Զանգակ հրատ., Երևան, 2006:
5. Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն Հին և միջնադարյան գրականություն, Զանգակ հրատ., Երևան, 2006:
6. Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Առաջաբանը, բառարանը և ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի, նկ. Հ. Կոջոյան, Լույս հրատ, Երևան, 1981: